ԱԺԲԳ

ՏԵՂԵԿԱՆՔ

2021-2023թթ. ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրից ստացված և ՀՀ-ից ֆիզիկական անձանց կողմից արտերկիր իրականացված փոխանցումների վերաբերյալ (հունվար-հունիս)



2023թ. հունվար-հունիսին ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրից ստացվել է 1 տրլն 140.6 մլրդ դրամ, ինչը 285.5 մլրդ դրամով կամ 33.4 %-ով ավել է 2022թ. և 646.2մլրդ դրամով կամ 130.7 %-ով ավել է 2021թ. համապատասխան ժամանակաշրջանների ցուցանիշներից, իսկ 2022թ. հունվար-մայիսի ցուցանիշից ավել է 537.9 մլրդ դրամով կամ 89.2%-ով: 2023թ. հունվար-հունիսին ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց կողմից արտերկիր է փոխանցվել 790.1մլրդ դրամ, ինչը 384.7 մլրդ դրամով կամ 94.9 %-ով ավել է 2022թ. և 495.2 մլրդ դրամով կամ 167.9 %-ով ավել է 2021թ. համապատասխան ժամանակաշրջանների ցուցանիշներից, իսկ 2022թ. հունվար-մայիսի ցուցանիշից ավել է 481.6 մլրդ դրամով կամ 156.1%-ով: 2023թ. հունվար-հունիսին ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրից ստացված և արտերկիր փոխանցված դրամական միջոցների զուտ ներհոսքը կազմել է350.6 մլրդ դրամ,ինչը 99 մլրդ դրամով կամ 22%-ով պակաս է 2022թ. և 151.1 մլրդ դրամով կամ 75.7 %-ով ավել է 2021թ. համապատասխան ժամանակաշրջանների ցուցանիշներից, իսկ 2022թ. հունվար-մայիսի ցուցանիշից ավել է 56.3 մլրդ դրամով կամ 19.1%-ով:

2023թ. հունվար-հունիսին ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրից ստացվել է 2 մլրդ 925.1 մլն դոլար, ինչը 1 մլրդ 55.1 մլն դոլարով կամ 56.4 %-ով ավել է 2022թ. և 1 մլրդ 976.9 մլն դոլարով կամ 208.5% -ով ավել է 2021թ. համապատասխան ժամանակաշրջանների ցուցանիշներից, իսկ 2022թ. հունվար-մայիսի ցուցանիշից ավել է 1 մլրդ 652.9 մլն դոլարով կամ 129.9%-ով: 2023թ. հունվար-հունիսին ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց կողմից արտերկիր է փոխանցվել 2 մլրդ 27.4 մլն դոլար, ինչը 1 մլրդ 151.3 մլն դոլարով կամ 131.4 %-ով ավել է 2022 թ. և 1 մլրդ 462.1 մլն դոլարով կամ 258.6%-ով ավել է 2021թ. համապատասխան ժամանակաշրջանների ցուցանիշներից, իսկ 2022թ. հունվար-մայիսի ցուցանիշից ավել է 1 մլրդ 381.1 մլն դոլարով կամ 258.6%-ով: 2023թ. հունվար-հունիսին ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրից ստացված և արտերկիր փոխանցված դրամական միջոցների զուտ ներհոսքը կազմել է 897.7 մլն դոլար, ինչը 96.2 մլն դոլարով կամ 9.7%-ով պակաս է 2022թ. և 514.8 մլն դոլարով կամ 134.4 %-ով ավել է 2021թ. համապատասխան ժամանակաշրջանների ցուցանիշներից, իսկ 2022թ. հունվար-մայիսի ցուցանիշից ավել է 271.7 մլն դոլարով կամ 43.4%-ով:

*** Տեղեկատվության համար աղբյուր են հանդիսացել Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի ինտերնետային կայքի արտաքին հատվածի վիճակագրության հրապարակումները՝ ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրից ստացված և ՀՀ-ից ֆիզիկական անձանց կողմից արտերկիր իրականացված փոխանցումների վերաբերյալ**